

ԿՐ Օ Ն Ա, Կ Ա, Ն Ը

ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՑԱԽԵՐԻՑ

Իսկզբանէ արժանաց արու եւ կգ արար զնսա
 Աստուած եւ ասէ. վասն այսօրիկ բողքէ այր զնայր իւր
 եւ զնայր, եւ երբիցէ զնէս կնոջ իւրոյ: Եւ եղիցին եր-
 կուին ի մարմին մի եւ այնուհետեւ ոչ են երկու'ալ մար-
 մին մի: Արդ զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեացէ:
 Եւ ի սուն դարձեալ առակերսն զնոյն հարցին զնա: Եւ
 ասէ ցնոսա. երէ այր արձակեացէ զկին իւր եւ արացէ
 ալ՝ շնայ: Եւ կին երէ ելցէ յառնէ իւրմէ եւ եղիցի
 առն այլում՝ շնայ:

Աւետար. Մարկոսի զլ. Ժ. 6—12

Նոյն—Մատթեոսի զլ. Ե. 31, 32

» » զլ. ԺԹ. 10—12

Նոյն—Ղուկասու զլ. ԺԶ. 18—19.

Վերջին տարիներս մեր պաշտօնական ամսագրով հե-
 տաբրքուսդ անձինք անշուշտ նկատած կլինին մի ախար
 և առաւել քան անմխիթար երևոյթ. այն է մեր ընտա-
 նեկան կեանքի անկումն, խորտակումն այն հզօր և սուրբ
 ամբօցի, որն երբէք եկեղեցուց պակաս նշանակութիւն
 չի ունեցել մեր ազգային—կրօնական ինքնօրոյն գոյու-
 թեան պահպանութեան խնդրում:

Ընտանիքը փոքրիկ թաղաւորութիւն է և կենդանի
 պատկեր ու հիմունք ազգային հասարակական աւելի մեծ
 համախմբումներէ: Որքան հաստատուն է նրա անդամների
 միջի կապն, այնքան ուժեղ և անդրգուելի է լինում այդ-
 պիսի ընտանիքներէց կազմած համայնքն ու ազգը և պատ-
 շաճաւոր բարձրութեան վրայ դրուած նրա սրբութիւննե-
 րը: Ո՞վ չըզխտէ, որ ընտանիքն է ամենամեծ և անդրանիկ
 դպրոցը, կրօնի և լեզուի՝ աստուածսիրութեան, ինքնու-

ընդունութեան հիմնադիր, բարոյականութիւն սերմանող, կամ՝ ընդհակառակն՝ ամենայն օրէնք և սրբութիւն խորտակող: Ընտանեկան միութիւնը դեռ շատ հին դարերից՝ նախաստեղծ մարդուց սկսած՝ օրհնուած և սրբագործուած է եղել ստեղծագործող բերանով և աջով, և բոլոր կրօնների հիմնադիրներն էլ անխափ աշխատել մ'ն ամուր հողի վրայ գնել ընտանեկան կապն ու նրա անքակտելիութիւնը: Ճիշտ նոյն ձևովն էլ բոլոր ազգերի օրէնսդիրներ և օրինադրքեր առանձին ուշադրութիւն են դարձրել և պաշտպանել ազգային հասարակական կեանքի և նրա բարգաւաճման այդ ամենամեծ հիմունքը:

Բայց ընտանիքի սրբութեան և նրա անդամների հաւասարութեան ամենամեծ պաշտպանն ու հովանաւոր հանդիսացաւ Աստուածօրդին, և ցոյց տուեց, որ Արարիչն իսկզբանէ արու և էգ է ստեղծել և զուգաւորել, որ զոյգը մի մարմին պէտք է լինի, և Աստուծոյ ձեռքով միացածներին մարդիկ չը բաժանեն. «Զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեացէ: Եթէ այր արձակէ զկին իւր և արացէ այլ՝ շնայ: Եւ կին եթէ ելցէ յառմէ իւրմէ և եղիցի առն այլում՝ շնայ»: Մօտ անցեալում, թէև ոչ իբրև կատարելատիպ, մենք այնուամենայնիւ բաւականաչափ պահուած էինք տեսնում այս պատգամը և եկեղեցական ամուսնութեամբ միացողներն հասկանում էին Աւետարանի պահանջն ու այդպէս էլ անցկացնում իրենց կեանքը: Ո՞ր ճանապարհօրդը չի հիացել հայ ընտանիքի նահապետական մաքրութեամբ, բարոյականութեամբ և աշխատասիրութեամբ: Ո՞վ չի հիացել նահատակ հայ կնոջ անօրինակ հաւատարմութեամբ դէպի իւր բացակայ՝ օտարութեան մէջ մշակութեամբ պարապող ամուսինը, ո՞վ չի ողևորուել մօր և աշխատաւորի այդ չքնաղ տիպարը գիտելով: Ես ազօտ յիշում եմ Ելիսեեկի ճանապարհօրդական տպաւորութիւններն ու նրա սղեորութիւնը հայ կնոջ և ընտանիքի առաքինութիւնները թուելիս ու նկարագրելիս: Եւ իրօք նա մեծ ամրոց էր, անխորտակելի մի վահան, որ պաշտպանեց քրիստոնէական կրօնն ու հայութիւնը շրջա:

պատող արհաւիրքներինց։ Իսկ այդ բոլորի պատճառն այն էր, որ հայ կինը շատ շուտ հասկացաւ իւր կոչումը, քրիստոնէական վարդապետութեան պահանջած ընտանեկան կեանքն ու նրա պարտաւորութիւնները։ Ինչ որ հինգերորդ դարում ճշմարիտ քրիստոնէական առաքինութիւնն ու մաքրութիւն չի բուրում երանելի առաքինիների կանանցինց, որ չքեղ մեծացած, փաթթած և ճոխ կեանքի սովոր, ամենայն նեղութեանց համբերեցին և իրենց կեանքը սիրելի բանտարկեալների վիշտն ու նեղութիւնը թեթեացնելու նուիրեցին՝ մաքուր հաւատով քրիստոնէական դաղափարին ծառայելով։ Արդեօք մեծ կամ փոքր չափով միշտ նոյնը չէր հայ ընտանիքն ու հայ մայրը։ Արդեօք նա նոյնը չէ և այժմն այնտեղ, ուր պահպանուել է մաքուր հաւատ, ձեռք է բերուել կանոնաւոր և ոչ թէթեւ սովի՛ մակերևութական ուսումն և ուր մեր հիւանդատ կեանքի թունաւորուած քարոզը գեռ ևս չի հնչել։

Բարեբաղդաբար կարող ենք ասել, որ մեր նահապետական սրբղ և լուրջ կրթութիւն ստացող միջավայրը գեռ չի հեռացել Աւետարանի ճշմարիտ պահանջներից, գեռ ամուր է պահում ընտանեկան սրբութիւնը և հասկանում է այն վեհ և բնատուր խորհուրդը, որը կոչել է նրանց ընտանիք կազմելու։ Բոլորովին այլ պատկեր է ներկայացնում մեր բուրժուայի՝ հարուստ դասակարգի և ժամանակակից կեղևային շկոլայով անցած մարդկանց՝ միջին և հարուստ դասակարգի ընտանեկան կեանքը։ Նրանք սուրում են կրքի համար, մի միայն ապրիանք և կերակուր գիտեն, նրանց համար չկայ ոչ ամուսնական խորհուրդ, ոչ մարդկային բնութեան ձայնը, որ հակառակ է շնութեան, ոչ օրէնք և ոչ սրբութիւն։ Սոսկ բառերն անգիր արած, կրքի կուլը պաշտամունք և դաւանանք դարձրած, այդ դասակարգը քարոզում է ազատ սէր, հնազանդութիւն սրտի (կրքի) ձայնի և խոշտակումն ծնողական, հասարակական և կրօնական պարտաւորութիւնների։ Բանն այնտեղ է հասել, որ հայ մօր և հայ մարդու անկումն ու անըարոյականութիւնն արդարացնելու համար ստեղծուի


է սէր կոչուած (մեր ժամանակի) հասկացողութիւնն և հարց արոււմ, արդեօք երբ հայ մօր կամ մարդու կիրքը շարժուեց, նա իրաւունք չունի և դաւակ և ամուսին և ազգ և հաւատն ուրանալու, և այդ հարցը արոււմ է կրթարանի բեմից: Ճիշտ նոյն քարոզի արդիւնքն է ահա մեր ընտանեկան մաքրութեան անկումն և այն քայքայող երևոյթը, որն աճում է հեռզհեռէ և որի տխուր պատկերը՝ սե, մաշող վշտի նման ծանրանում է հայկական կեանքում և արտափայլում Արարատի էջերում: Մինչև 1893 թուականը, ճիշտ է երբեմնակի խնդիրներ էին մանում Մինօդ ամուսնացածների կողմից ամուսնալուծութեան մասին, բայց դրանց թիւն այնքան չնչին էր, որ չարժէր անգամ կանգ առնել և նոյն իսկ ամուսնալուծութիւն թոյլատրել, ամուսնալուծութիւն, որ հակառակ է Աւետարանին և խղճին, հակառակ է ճնողական զգացմունքներին և բարոյական օրէնքներին: Իսկ 1893 թուականից, երբ անհատի, շատ անգամ անտեղի և կեղծ արցունքներին աւելի գթօտ վերաբերուեց ներկայ Վեհափառ Հայրապետը, բուրժուան և միջավայրից ապականուած ու կրքի պաշտամունքով ապրող շրջանը ցանկացաւ օգուտ քաղել այդ գթաւատութիւնից և այժմ տարեկան միջին թուով 400 ամուսնալուծութիւն է տեղի ունենում մեզանում, և այդ ահագին թուի 95% ընկնում է ռուսահայոց՝ այն էլ շատ որոշ շրջաններին: Ընդունելով մեր թիւը մի միլիոն երկու հարիւր հազար և քսանհինգ հոգուն տարեկան մի պսակ, կստանանք 4800 պսակ, որոնցից մօտ չորս հարիւրը լուծուելու գիմումն է լինում, ահա ձեզ շատ տխուր պատկեր՝ — որ ամուսնացողների քսան տօկսը ընտանիք կազմել չի կարողանում, չի հասկանում ընտանեկան սրբութիւններն, եկեղեցական ամուսնութիւնն ընդունում է սոսկ իբրև միջոց իւր նպատակին հասնելու, կրքի և ոչ թէ ընտանիք կազմելու համար որոշ անձնաւորութեան հետ միանալու և ոչ մի սահման, սրբութիւն և բարոյական օրէնք չը ճանաչելու: Եթէ այս թուին միացնենք և նրանց, որոնք փոխադարձ դաւաճանութեամբ են անցկացնում իրենց կեանքը

գաղանի կամ յայտնի և արդէն հաշտուել են այդ դուրս-
 թեան հետ. եթէ հաշուենք առանց ամուսնութեան կե-
 նակցողներին, կլինակիններին և կրկնայր ունեցողներին,
 ինչպէս որ կարդում ենք Ազարատի սոյն համարի Տաճկա-
 հայք կոչուած բաժնում, իրօք շատ ծանր և անմխիթար
 պատկեր կըստանանք:

Ո՞րտեղ է շարեաց աւատը, Իսկապէս սէր կոչուած
 զգացմունքն է բոլորի առիթը, տնտեսական խնդիրներն են
 արդեօք այս տխուր երևոյթներ բացատրելու միակ բա-
 նակին, ինչպէս սովորենք լսել, կրթութիւնն ու ճաշակն են
 նրանց առիթ տուողը, թէ ծանրութեան գլխաւոր կեղ-
 բոնը պէտք է մի այլ տեղ սրօնել:

Անշուշտ տնտեսական խնդիրները բաւականին մեծ
 նշանակութիւն ունին, անշուշտ ազդում է թեթեւ և կրքի
 պաշտամունքով կենցաղափարութիւն քարոզող կեղևակր-
 թութիւնը, բայց մեր կարծիքով ամենագլխաւոր պատ-
 ճառն այն է, որ մեր անհօգութեան, ագիտութեան և
 ծուրութեան շնորհիւ մարդկանցից ծածուկ է պահոււմ
 ամուսնական կեանքի քրիստոնէական իդէալը և նրա վրայ
 հիմնուած եկեղեցական ամուսնութեան ճշմարիտ պա-
 հանջներն ու այդ խորհրդի ամենաէական և վեհ մասը:

Բայց ամուսնական խորհրդին, նրա վերաբերեալ
 օրէնսդրութեան և Աւետարանի գծած իդէալին կը դառ-
 նանք միւս անգամ:



ՄԸՅՐ ԱԹՈՒ

Համաձայն Վեհափառ Հայրապետի միջնորդութեան
 Աստրախանի Թեմակալ առաջնորդ Գերապատիւ Տ. Արխի-
 տակէս արքեպիսկոպոսին Բարձրագոյն թոյլատրուեց մեկ-
 նիլ արտասահման բժշկուելու համար: